

610-ԱԿԱՆ ԹՈՒԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐՋԻՆ ՇԱՐԱԴՐՈՒԱԾ «ԱՇԽԱՐՀԱՑՈՑ»Ի ՀԵՂԻՆԱԿԻ ԾՇՏՄԱՆ ՓՈՐՁ

«Աշխարհացոյց»ի ամբողջական գիտա-քննական ընագրի կազմման առիթով (տպագրուած «Հանդէս ամսօրեայ»ի 2013 տարեգրքում)¹ մեր կողմից կատարուած վերլուծութիւնը թոյլ է տալիս մտածել, որ հայկական վաղ միջնադարի այդ բացառիկ աշխարհագրական երկի ստեղծման գաղափարն ու գաղափարախօսութիւնն, ըստ ամենայնի, ուղղակիօրէն ներշնչուած են 610ական թուականների առաջին կէսում խոսքով Բ. Ապրուէզ Սասանեան արքայի տիրապետութեան տակ վերամիաւորուած Մեծ Հայք աշխարհ-շահրում վարչական սպասելի բարեփոխման, մասնաւորապէս՝ «Հայոց իշխանի» հանգամանքի հաստատման հեռանկարից եւ իրողութիւնից:

Դեռեւս 1940ին Աշ. Աբրահամեանի կատարած ամփոփմանը յղում կատարելով՝ կրկին յիշենք, որ «Աշխարհացոյց»ի ստեղծման «Ժամանակի վերաբերեալ բանասերները յայտնել են իրարից տարբեր չորս հիմնական կարծիք. 1) Միսիթարեաններն «Աշխարհացոյց»ը համարել են Մովսէս Խորենացու աշխատութիւն՝ Խորենացուն համարե-

1 Աշխարհացոյց է ԴԱՐԻ ԱՆԱՆՈՒՆԻ, Գիտա-քննական քնագիր Ա. ՅԱԿՈԲԵԱՆԻ, – «Հանդէս ամսօրեայ», ՃԻԵ. տարի, Վիեննա-Երևան 2013, սն. 35-194: «Աշխարհացոյց»-ի նախորդ հրատարակութիւններից տե՛ս Սրբոյ Խորն մերոյ ՄՈՎՍԵՍԻ ԽՈՐԵՆԱՑԻՈՅ Մատենագրութիւնէ, Վեմետիկ 1848, էջ 585-616; *Армянская география VII века по Р. X.*, Текст и перевод издал К. П. ПАТКАНОВ, СПб., 1877; *Աշխարհացոյց Մովսէսի Խորենացու, Յաւելուածով՝ նախնեաց* [Խրատ. ՍՈՒՔՐԵԱՆ, Հ. Ա.], Վեմետիկ – Ս. Ղազար 1881; ԱՐՐԱՀԱՄԵԱՆ, Ա. Գ., *Ամանիա Շիրակացու մատենագրութիւնը*, Երևան 1944; ԵՐԵՄԵԱՆ, Ս. Տ., «Աշխարհացոյց»-ի սկզբնական քնագրի վերականգնման փորձ, – ՊԲՀ, 1972, հմր 4, էջ 209-230; 1973, հմր 1, էջ 238-252; 1973, հմր 2, էջ 261-274:

լով Ե. դարի հեղինակ. 2) Սեն-Մարտենն «Աշխարհացոյց»ը համարել է կեղծ (սուտ) Մովսէսի գործ՝ գրուած Թ. դարի վերջերում կամ Ժ. դարի սկզբներում. 3) Յ. Մանանդեանն «Աշխարհացոյց»ը համարել է խորենացու աշխատութիւն՝ խորենացուն բերելով Թ. դար եւ, վերջապէս, Ք. Պատկանեանն «Աշխարհացոյց»ը համարել է Անանիա Շիրակացու գործ՝ գրուած Է. դարում»²: Աշ. Աբրահամեանի այս նշածներին յետագայ տասնամեակներին աւելացել է միայն Ս. Երեմեանի կարեւոր տեսակէտը, համաձայն որի՝ երկը կարող էր գրուել 618 թուականից ոչ ուշ, քանի որ, ըստ Սեբիոսի³ եւ շինարարական արձանագրութեան՝ այդ տարում է Վաղարշապատում կառուցուել (կամ առնուազն՝ հիմնադրուել) Սբ. Հռիփսիմէի եկեղեցին, իսկ «Աշխարհացոյց»-ում նրա փոխարէն դեռեւս խօսուում է «մարտիրոսուհիների մատուռների» մասին⁴. Ճիշտ է՝ ուսումնասիրողն, ի վերջոյ, նախընտրում է 610 թուականի նախօրեակը՝ համարելով, որ Վիրքի սրբավայրերի մասին աշխարհագէտ հեղինակի դրական նկարագրութիւնն աւելի հաւանական է վերագրել Հայ եւ Վրաց եկեղեցիների բաժանմանը (609ի) նախորդած տարիներին⁵:

Արդ, ինչպէս յայտնի է, 610ին Բիւզանդիայի Փոկաս կայսրին սպանեց նրա աստամբած Հերակլ զօրավարը, որը նոր կայսր հռչակուեց եւ զահին տիրեց երեք տասնամեակ (610–641): Հերակլ կայսեր իշխանութեան առաջին մէկուկէս տասնամեակները, ինչպէս յայտնի է, եղան կայսրութեան էական թուլացման ջրձանը: Օգտուելով իր այդ գլխաւոր հակառակորդի խառնակ վիճակից՝ Իրանի արքայից արքայ Խոսրով Ապրուհզի յաղթական բանակները շատ արագ գրաւեցին Բիւզանդիայի գրեթէ բոլոր արեւելեան

2 ԱՐԲԱՀԱՄԵԱՆ, Ա., *Խորենացուն վերագրուող «Աշխարհացոյց»-ի հեղինակի հարցի շուրջը*, Երեւան 1940, էջ 48:

3 Պատմիչի անուան այս ճշգրիտ ձեւի մասին տե՛ս ԱԿԻՆՅԱՆ, Հ. Ն., *Սեբիոս եպիսկոպոս Բագրատունեաց եւ իւր Պատմութիւնն ի Հերակղ*, – «Մատենագրական հետազոտութիւններ», հ. Բ, Վիեննա 1924 (Ազգային մատենադարան, ՃԻ): ՅԱԿՈԲՅԱՆ, Ա., *Սեբիոսի Պատմութեան հատուածաբաժանման խնդիրը եւ Զուարթնոցի տաճարի կառուցման մասին գլուխը*, – «Հանդէս ամսօրեայ», ՃԺԹ տարի, Վիեննա-Երեւան 2005, ս. 213–270:

4 ԵՐԵՄԵԱՆ, Ս. Տ., *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի (Փորձ VII դարի հայկական Բարսեղի վերակազմութեան ժամանակակից Բարսեղագրական հիմքի վրայ)*, Երեւան 1963:

5 «Աշխարհացոյց»-ի մասին գրականութեան վերջին հիմնարար ամփոփումը տե՛ս ՅԱՐՈՒԹԻՆԵԱՆ, Բ. Յ., *Մեծ Հայքի վարչա-խաղաքական քաժամանակ համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի*, մաս Ա, Երեւան 2001:

պրովինցիալները՝ 612ին՝ Փոքր Ասիայի մեծ մասը, 614ին՝ Պաղեստինը (գերուսեց Տէրունական խաչը), 617ին՝ Եգիպտոսը: Հէնց այդ պատմական պահին տեղի ունեցաւ 385 կամ 387 եւ 591 թուականներին զոյգ բաժանումներով երկատուած Հայաստանի (Մեծ Հայք երկրի) երկու մասերի վերամիաւորումը Սասանեանների տէրութեան կազմում:

Ներկայումս լիովին հնարաւոր է թուում փաստարկել, որ մեզ չիմբազրուած-չհամառօտուած տարբերակով միայն մէկ ձեռագրում հասած (Վեմետիկի թիւ 1245. ընդօրինակուած է Հայոց ՌԾԳ. (1604) թուականին, ցաւալիօրէն, խիստ անուշադիր գրիչ Ստեփաննոսի կողմից՝ «Աշխարհացոյց Մովսէսի Խորենացոյ ասացեալ» վերտառութեամբ, ք. 1ա-38բ)⁶ այդ աշխարհագրական երկը (նրա շրջանառու «ընդարձակ խմբագրութիւն» անուանումը չի կարող ճշգրիտ համարուել՝ հէնց նշուած պատճառով) սկզբնապէս շարադրուել է նախ եւ առաջ՝ իբրեւ մի յատուկ ծրագրային փաստաթուղթ-տեղեկատու՝ Տիգրանում 615/616ին կայացած (Մ. Վան էսթրուկի հաշուարկով՝ 617/618ին)⁷, այսպէս կոչուած, «Պարսից ժողովին» մասնակցող հայկական «պատուիրակութեան» կողմից օգտագործուելու նպատակով: Սեբրիս պատմիչի ուղիղ վկայութեամբ (ով իր աշխատանքն սկսել էր մօտաւորապէս 643ին եւ երրորդ փուլում գրիչը վայր դրել 659ի առաջին կէսին)⁸, Տիգրանի ժողովին մեկնողներն իրենց հետ էին վերցրել նման մի նիւթ. «Ունեին պատրաստական անդ ընդ իմեանս զգիր սրբոյն Գրիգորի»⁹, Միւս զուգահեռը «Կնիք հաւատոյ» ժողովածոն է, որի ստեղծումը եւս մասնագէտները կապում են Կոմիտաս կաթողիկոսի եւ «Պար-

6 Ձեռագրի նկարագրութիւնը տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Միսիթարեանց ի Վեմետիկ, Կ. Բ., Յօրինեց ՍԱՐԳԻՍԵԱՆ, Հ. Բ. Վ., Վեմետիկ – Ս. Ղազար 1924, էջ 811-818:

7 ԴԱՆԻԷԼԵԱՆ, Է. Լ., Հայ եկեղեցու նկատմամբ Խոսրով Փարուէզի վարած Բաղաճականութիւնը, – ՊԲՀ, 1981, հմր 4, էջ 197: Հմմ. VAN ESBROECK, M., *L'encyclique de Komitas et la réponse de Mar Maroutha* (617), – «Oriens Christianus», 85, էջ 162-175:

8 Այդ հշգրտուած ժամանակագրութեան մասին տե՛ս ՅԱԿՈԲԵԱՆ, Ա., Սեբրիոսի Պատմութեան հատուածաբաժանման խնդիրը եւ Զուարթնոցի տաճարի կառուցման մասին գլուխը, սն. 213-270:

9 Տե՛ս Սեբրիոսի Նպիսկոպոսի Պատմութիւն, Զորրորդ տպագրութիւն, Բաղդատութեամբ ձեռագրաց, հանդերձ առաջաբանի եւ ծանօթութեամբ ի ձեռն ՄԱԼԽԱՍԵԱՆՅ, ՍՏ., Երեւան 1939, էջ 124: Պատմութիւն Սեբրիոսի, Աշխատասիրութեամբ Գ. ԱՐԳԱՐԵԱՆԻ, Երեւան 1979, էջ 170:

սից ժողովի» համատեքստի հետ¹⁰։ Սերիոսի ունեցած տեղեկութեան համաձայն՝ Սմբատ Բագրատունու եւ անձամբ խոսքով Ապրուէզ արքայի գլխադրութեամբ անցկացուած այդ «ժողովում» քննարկուել է լոկ դաւանական այն խնդիրը, որի արդիւնքում Հայոց եկեղեցու դաւանանքը հաստատուել է իբրեւ Սասանեան տէրութեան քրիստոնեայ համայնքների համար միակ ընդունելի (ըստ առկայ քննարկի՝ «Յորոյ վերայ հրաման ետ արքայ խոսքով, եթէ ամենայն քրիստոնեայք, որ ընդ իմով իշխանութեամբս են՝ հաւատ գՀայոցն կայցին»)։ *Սակայն լրացուցիչ աղբւրադիտական նիւթի քննական համադրումը թոյլ է տալիս մտածել, որ նոյն ժողովում կամ աւելի ճիշտ՝ նրա համատեքստում, ըստ ամենայնի, քննարկուել ու լուծում են ստացել նաեւ տարածքային ահռելի ձեռքբերումներ ունեցած Իրանական տէրութեան համար կարեւորագոյն այլ պետական, վարչա-քաղաքական խնդիրներ*։

Ըստ Ժ. դարի պատմիչ Մովսէս Դասխուրանցու «Պատմութիւն Աղուանից»ում (գրուած՝ 982-988 թթ. միջեւ¹¹) պահպանուած մի քանի ուշագրաւ տեղեկութիւնների՝ Աղուանից աշխարհի «առաջին իշխան» Վարազ Գրիգորը Վիրոյ Աղուանից կաթողիկոսի (596-629) խնդրանքով էր խոսքով արքայի կողմից նշանակուել իր պաշտօնում եւ «մկրտութիւն» էր ստացել Վիրոյից (հմտ. բնագրերը. «Վարդ ծնանի գվարազման եւ գՇուշիկ տիկին եւ գվարազ Գրիգոր՝ առաջին իշխանն Աղուանից, որ առ գմկրտութիւն ի Վիրոյէ՝ Աղուանից կաթողիկոսէ»։ «Այս Վարազ Տրդատ ի Միկրական տոհմէ էր, որք գԱղուանս ժառանգեցին որդի ի հօրէ առնով։ Սա ութերորդ էր ի Վարազ Գրիգորէ՝ առաջին իշխանէն Աղուանից»։ «Տէր Վիրոյ, ամս ԼԴ. ... սա խնդրեաց ի խոսքովայ արքայէ գրել պատիւս Գարդմանայ տէր եւ իշխան Աղուանից ի վերայ թղթոց «առ կուսակալս աշխարհիս», գոր եւ դեռես գրեն»)»¹²։

10 *Կնիք հաւատոյ ընդհանուր սուրբ եկեղեցւոյ... յաւուրս Կոմիտաս կաթողիկոսի համահաւաքեալ, Հրատ. ԿԱՐԱՊԵՏ ԵՊ., Վարդաշապատ, 1914: ԿՈՄԻՏԱՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ, Կնիք հաւատոյ, – «Մատենագիրք Հայոց», հտ. Դ., Է. դար, Անթիլիս 2005: Հմտ. VAN ESBROECK, M., *L'encyclique de Komitas et la réponse de Mar Maroutha*, էջ 162-175.*

11 Այդ ժամանակագրութեան նշումն մասին տե՛ս АКОПЯН А. А., *Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках*, Ереван 1987, 212-223:

12 ՄՈՎՍԵՍ ԿԱՂԱՆԿԱՏՈՒԱՑԻ, *Պատմութիւն Աղուանից աշխարհի, Քննական քննարկը եւ մեքածութիւնը Վ. ԱՌԱՔԵԼԵԱՆԻ, Երեսն 1983, գլ. Բ.Ժէ, էջ 172; Գ.Ժք /ի/, էջ 326; Գ.իգ /իդ/, էջ 343:*

Արդ՝ Վիրոյ կաթողիկոսը, ով 630-632 միջակայքում Անանուն Կաղանկատուացի կոչուած հեղինակի կողմից շարադրուած եւ Մովսէս Դասխուրանցու երկում բառացի արտագրուած «Վիրոյ կաթողիկոսի պատմութիւն» կոչուող միաբնակ երկի վկայութիւններով՝ իր իշխանութեան առաջին տարիներէից (ճշգրիտ՝ 602ից) մինչեւ նախալերջին տարին (628) ապստամբներին սատարելու կասկածով Տիգրեոնում էր պահուած պատուաւոր աքսորեալի կարգավիճակով¹³, ըստ Սեբիոսի՝ 610ական թթ. կէսերին Տիգրեոնի «Պարսից ժողովի» մասնակիցներից էր, ընդ որում՝ երկաբնակ, քաղկեդոնական դաւանանքով (Սեբիոսի այդ հատուածն է. «Իսկ որք զՔաղկեդոնիս՝ զՎիրոյ զԱղուանից կաթողիկոսն, եւ այլ բազում եպիսկոպոսումք ի Յունաց կողմանէ, եւ իշխանք, որք եկեալ էին ի ծառայութիւն Պարսից Թագաւորին»): Ըստ Հայոց կաթողիկոս Անանիա Մովկացու (Ժ. դար) եւ Վրաց կաթողիկոս Արսէն Սափաբելու (Թ. դար)՝ է. դարի առաջին տասնամեակի եկեղեցական բաժանումից յետոյ, երբ յուսահատուած Աբրահամ Աղբաթանեցին 609 թուականին, ի վերջոյ, նզովք ուղղեց Վրաց կաթողիկոս Կիրիոնին եւ «Աղուանիցին» (այսինքն՝ Վիրոյին)¹⁴, Աղուանից եկեղեցին միաբնակութեան էր վերադարձրել Հայոց կաթողիկոս Կոմիտաս Աղցեցին (615-628)¹⁵, ով, ի դէպ, եւս «Պարսից ժողովի» մասնակիցներից էր՝ դեռ եպիսկոպոսի կարգավիճակով: Նշուած վկայութիւնները համադրելով՝ հաւանական է թուում մտածել, որ այսրկովկասեան երեք երկրների մեծ ինքնավարութիւնը խորհրդանշող ոչ միայն Աղուանից, այլեւ Հայոց եւ Վրաց «իշխան»ների հաստատութիւնները (ինստիտուտները) հիմնադրուել են (անկախ նախորդող դարաշրջանի նմանատիպ, բայց աւելի թոյլ հաստատութիւններից) հէնց «Պարսից ժողովում» կամ նրա համատեքստում: Իսկ այդ դէպքում պէտք է հասկանալի լինի, որ նշուած

13 Վիրոյի «ապստամբութեան» մասին առաւել մանրամասն տե՛ս ԲԱՐԽՈՒՍԱՐԵԱՆՑ, Մ. ԵՊ., Պատմութիւն Աղուանից, հտ. Ա, Թիֆլիս 1902, էջ 92-93: Ա.Լ.ԵՔՍԱՆ, Հ. Ն., Մովսէս Դասխուրանցի (կոչուած Կաղանկատուացի) եւ իր Պատմութիւն Աղուանից, Վիեննա 1970, էջ 197-200, АКОПЯН, А. А., Албания-Алуанк..., 191-192:

14 Գիրք Բողոքոց, Տփլիս 1901, էջ 193-194: Ա.ԲԱՀԱՄ ԱՂԲԱԹԱՆԵՑԻ, Թուղթք [6], Հրատ. ՄՈՒՐԱԴԵԱՆ, Պ., Ա. ՅԱ.ԿՈՐԵԱՆ, Ա., – «Մատենագիրք Հայոց», հտ. Դ., է. դար, Ամբիլիս 2005, էջ 19-20:

15 Տեառն Անանիայի հայոց կաթողիկոսի Յաղագս ապստամբութեան տանն Աղուանից..., «Արարատ», 1897, էջ 137: ՄԵԼԻՔՍԵՆԹԵԱՆ Լ., Վրաց աղբիւրները Հայաստանի եւ հայերի մասին, հտ. Ա (Ե-ԺԲ դար), Երեւան 1934, էջ 37-38:

ինքնավարական հաստատութիւնները ենթադրուով էին ոչ միայն Սասանեան կենտրոնական մարմինների կողմից Հայոց, Վրաց եւ Աղուանից «իշխան»ների իրաւասութիւնների յստակ սահմանում, այլեւ այն վարչատարածքների ճշգրիտ առանձնացում ու մատնանշում, ուր այդ իրաւասութիւնները պիտի գործէին:

Եւ ահա տեսնում ենք, որ մեր «Աշխարհացոյց»ը հէնց փորձում է բաւականաչափ յստակ սահմանել տուեալ տարածքները. ընդ սմին՝ Հայք աշխարհ-շահրի դէպքում է. դարի հայ աշխարհագէտը դա անում է 385/387 եւ 591 թուականներին բաժանագծերի բացարձակ անտեսումով (թէպէտեւ երկի բնագիրը բազմազան ու կարեւոր տեղեկութիւններ է հաղորդում այդ բաժանագծերի մասին): Ուշադրութիւն դարձնենք, որ «Աշխարհացոյց»ում յատուկ նշում են նաեւ, նորօրեայ եզրոյթով ասած՝ «վիճելի» հատուածները («որ ի Հայոց համեալ են» կամ «ի Հայոց առեալ են» բառերով)՝ Գուգարք նահանգի գաւառները՝ Վիրք-Վարջան աշխարհ-շահրի դէպքում, Արցախի եւ Ուտիքի գաւառները՝ Աղուանքի դէպքում, եւ Կասպք-Փայտակարան նահանգը՝ Ատրպատական աշխարհ-շահրի դէպքում: Նկատենք, որ «Պարսից ժողովի» հայկական պատուիրակութեան հէնց այս տարածքային «յաւակնութիւնները», ի տարբերութիւն խմբի մնացեալ նպատակադրումների, մնացին Տիգրանի կենտրոնական իշխանութեան կողմից «չբաւարարուած»՝ Այդպէս՝ «Հայոց իշխան»ը, որի լիազօրութիւնների ճանաչումը շուտով որդեգրուեց Բիւզանդիայի, ապա նաեւ Արաբական խալիփայութեան կողմից, իրաւասութիւններ չստացաւ Գուգարք, Արցախ, Ուտիք եւ Փայտակարան նահանգների նկատմամբ, եւ դա շարունակուեց ընդհուպ մինչեւ Աբբասեանների կողմից «Արմինիայի» իշխանաց իշխանի հաստատութեան սահմանումը Թ. դարի առաջին կէսում, որն, ի դէպ, բաւականին արագ վերածեց թագաւորական իշխանութեան. ընդ սմին Բագրատունի թագաւորները, ովքեր շատ արագ զիջեցին իրենց գերիշխանութիւնը խալիփայական «Արմինիայի» մաս կազմող Բուռն Վիրքի եւ Բուռն Աղուանքի նկատմամբ (պաշտօնական արձանագրումը կարելի է տեսնել գոնէ Կոստանդին Միլանածնի մօտ), ամենեւին բաց չթողեցին պատեհութիւնը՝ վերը նշուած ծայրամասային նահանգները միասնական հայկական պետութեան կազմում «վերամիաւորելու» հարցում (որն, ըստ Կ. Իւզբաշեանի դիպուկ դիտարկման, ոչ պատահականօրէն էր վերստին ստացել «Մեծ Հայք» պաշտօնական անուանումը¹⁶):

16 ЮЗБАШИЯН, К. Н., Армянские государства эпохи Багратидов и Византия IX-XI вв., Москва 1988, 81.

«Աշխարհացոյց»-ի ստեղծումը 610ական թուականի երկրորդ կեսին վերագրելով (թերեւս՝ նախքան 618, երբ կառուցուեց Վաղարշապատի Սբ. Հռիփսիմէի եկեղեցին, որի փոխարէն երկը դեռեւս նշում է «մարտիրոսուհու մատուռ»), գոնէ իբրեւ վարկած՝ հնարաւոր է շեշտել պատմական մի քանի հետաքրքրական իրողութեան վերաբերող խնդիրների նորովի քննարկման անհրաժեշտութիւնը: Դրանցից մէկն է, թէ՛ արդեօք «Պարսից ժողովի» համատեքստում միաբնակութեանը չէր վերադարձուել նաեւ Վրաց եկեղեցին՝ բնականաբար, ժամանակաւորապէս եւ, անշուշտ՝ ստիպողական եղանակով: Վերջինը հէնց այն եղանակն է, որից բառացիօրէն խուսափում էր Սմբատ Բագրատունին 600ական թուականներին (Մովսէս Յուրտաւեցի եպիսկոպոսին ուղղուած վերջին նամակում սրտնեղելով՝ «ከռ չեմ կարող սրի փաշի այդ ամբողջ ժողովրդին»¹⁷), երբ, շեշտենք, բոլորովին այլ էր պարսկա-բիւզանդական ուժերի յարաբերակցութիւնը (եւ պարսից կողմը ստիպուած էր աւելի նրբանկատ լինել): Զէ՞ որ, ինչպէս նկատել է դեռեւս Ս. Երեմեանը, «Աշխարհացոյց»-ում Վրաց աշխարհ-շահրի նշանաւոր սրբավայր Մցխիթայի խաչը ներկայացուած է լիովին դրական լոյսով, այն դէպքում, երբ 609ին Աբրահամ Աղբաթանեցին նգովքի սպառնալիքով արգելեց իր հօտին ուխտի գնալ այնտեղ: Ի դէպ, ուսումնասիրողն այդ հիմքով էր «Աշխարհացոյց»-ի ստեղծումը թուագրում 609/610 թուին նախորդող ժամանակով, որն, այսպիսով, պիտի համարուի վերապահելի:

«Աշխարհացոյց»-ի՝ նման, փաստօրէն՝ ուղիղ վկայութեանը կարելի է յաւելել հայ եւ վրաց մատենագրական երկերի (այդ թւում՝ վերը նշուած «Վիրոյ կաթողիկոսի պատմութեան») անուղղակի տուեալներն այն մասին, թէ ինչ անողորմութեամբ էր 626-627ին Հերակլ կայսեր լեգէոնների ու նրա զաւանակից թիւրքիւտների (վրացական երկում՝ խազարների) հրոսակների դէմ մարտնչում Տփղիսի ամրոցում շրջապատուած «Քարթլի էրիսթաւ» Ստեփանոս-Ստեփանէն¹⁸ (Անանուն կաղանկատուացու երկում՝ «տեղա-

17 ՄՄԲԱՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ, Թուղթք [3], Հրատ. ՄՈՒՐԱԴԵԱՆ, Պ., ՅԱԿՈԲԵԱՆ, Ա., «Մատենագիրք Հայոց», հտ. Դ., Ամբիլիսա 2005, էջ 340:

18 ДЖУАНШЕР ДЖУАНШЕРИАНИ, Жизнь Вахтанга Горгасала, Перевод, введение и примечания Г. В. ЦУЛЯЯ, Тбилиси 1986, 99-100: Քարթլիս ցխովրե-րայի կամ Վրաց պատմութեան հին հայերէն թարգմանութիւնը, Վրացերէն բնագիրը եւ հին հայերէն թարգմանութիւնը ուսումնասիրութեամբ եւ քառգրքով լոյս ընծայեց Ի. ԱՐՈՒԼԱՋԵՆ, Թիփլիսի 1953, էջ 189-190:

ցի Վրաց իշխանը»): Իսկ դեռեւս Անտիոքոս Ստրատեգոսի երկը քննելիս Ն. Մառը ցոյց է տուել, որ Հերակլ կայսեր նկատմամբ դրական կամ բացասական (անգամ՝ իներտ) վերաբերմունքից կարելի է որոշել հայ եւ վրացի մատենագիրների ու նրանց հերոսների՝ երկաբնակ կամ հակաքաղկեդոնական լինելը¹⁹: Տեղին նշենք, որ Ստեփանոզը 627ին մահապատժի ենթարկուեց (մորթագերծ աւրուեց) Իրանի դէմ ծանր պատերազմում, ի վերջոյ, յաղթանակած Բիւզանդացիների կողմից (628ի գարնանն իր մայրաքաղաքում սպանուեց նաեւ Խոսրով արքան), որից յետոյ, ամենայն հաւանականութեամբ, Վիրքը վերադարձուեց քաղկեդոնական դաւանանքին. ընդ սմին՝ 632ին Կարնոյ ժողովում Հերակլի պարտադրած միակամութեան-մոնոթելիզմի «փոյզիջումային» (բոլոր դէպքերում, իրօք՝ աւելի մեղմ) տարբերակով երկաբնակութեանը զիջումների զնաց նաեւ Հայոց կաթողիկոս Եզր Արասեզացին:

Արդ՝ այս քննութեան արդիւնքները թոյլ չեն տալիս համաձայնուել մասնագիտական դրականութեան մէջ վերջին տարիներին ձեռնարկուած նոր փորձերին (Բաբկէն Յարութիւնեան եւ Ալբերտ Մուշեղեան)՝ փաստարկելու Ե. դարի երկրորդ կէսի պատմիչ Մովսէս Խորենացուն «Աշխարհացոյց»ի հեղինակ աւուանդ ուշ ձեռագրական աւանդոյթի հաւաստիութիւնը²⁰:

Ճիշտ է, նշուած ուսումնասիրողների փորձերը վերաբերում են ոչ թէ մեզ հասած բնագրին (գոնէ Զ. դարի վերջին յարող ծաւալուն նիւթով Յառաջաբանը, Մեծ Հայքն իր չրջակայ երկրներով, Պարսից աշխարհը եւն.), այլ վերջինիս համար իբրեւ նախագաղափար ծառայած ինչ-որ մի օրինակի (Է. դարում իբրեւ թէ «լուրջ խմբագրութեան» ենթարկուած): Սակայն նման ենթադրական օրինակի բնութագրիչները (պարամետրերը), այդուհանդերձ, չեն սահմանուում նշուած մասնագէտների հրատարակած աշխատանքներում (իրականում՝ «Աշխարհացոյց»ը մեծապէս արտացոլում է օգտագործած գլխաւոր աղբիւրների՝ Պտղոմէոսի եւ Պապպոս Աղէքսանդրացու երկերի՝ Բ. եւ Դ. դարերին վերաբերող նիւթը, որին է. դ. հեղինակն աւելացրել է այլ աղբիւրներից քաղած իր ոչ պակաս պատկառելի գիտելիքը, բայց

19 АНТИОХ СТРАТИГ, Пленение Иерусалима персами в 614 г., Груз. текст исследовал, перевел, издал ... Н. МАРР, СПб. 1909, 60.

20 ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ, Բ. Յ., Մեծ Հայքի վարչա-ժողովական քաղաքական համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան 2001; ՄՈՒՇԵՂԵԱՆ, Ա. Վ., Մովսէս Խորենացու դարը, Երևան 2007:

նշուած «վաղ» դարերի այդ նիւթը, ինչպէս եւ որեւէ այլ վաղ արքրերադիտական նիւթ, չպէտք է մեզ շտապողական ժամանակադրական լուծումներ պարտադրի: Ի դէպ, մեր առայժմ նախնական տպաւորութեամբ՝ գուցէ, փոխարէնը կարող է հեռանկարային լինել «Աշխարհացոյց»-ի հեղինակի փնտրտուքը «Պարսից ժողովի» այն երկու հայ մասնակիցների թուում (Կոմիտաս Մամիկոնէից եւ պիսկոպոս եւ Մատթէոս Ամատունեաց եպիսկոպոս), որոնց յիշում է Սեբիոսը («Դիպեցան անդ արբ երկու եպիսկոպոսք յաշխարհէն Հայոց, արբ հաւատարիմք, զորս վասն բոցութեան աշխարհին էին արձակեալ, զի ծանուցեմ թագաւորիմ՝ Կոմիտաս Մամիկոնէից եպիսկոպոս եւ Մատթէոս Ամատունեաց») ²¹. Նման վարկածը ներկայումս պիտի ճշտի յայտնի երկերի ու դաւանական ժողովածոների բանասիրական յատուկ քննութիւնը:

«Աշխարհացոյց»-ի համառօտ խմբագրութեան՝ շուրջ 4 տասնեակ զբաղւորում մեզ հասած բնագրի համադրական ընթերցումը ցոյց է տալիս, որ համառօտ խմբագրութիւնն իրագործողն ուղղակի իր առջեւ չի դրել լուրջ սրբագրման կամ ծրագրային գաղափարախօսական խնդիրներ լուծելու նպատակներ: Նա կատարել է զուտ կրճատումներ ու պարզեցումներ, որոնք, բնականաբար, երբեմն յանգեցրել են բովանդակութեան յայտնի խեղաթիւրումների, սակայն՝ ամենեւին ո՛չ նպատակամղուած (օր.՝ Իրանշահի նկարագրութեան հատուածում, ուր համառօտը, իւրօրինակ ձեւով «խուսափելով կրկնութիւնից», չի պահել «Աշխարհ Պարսից» հատուածը, իսկ նրա չորս մասերի նիւթը լրիւ խմբագրել-բաժանել է յաջորդող՝ Մարքի, Ելիմացիքի, Պարսիքի եւ Արիքի գլուխների մէջ, որ համապատասխանում էին պտղովմէոսեան աշխարհներին)²²: Բացի այդ՝ ակնյայտ է, որ արաբների հզօրացումն արժարժուած չէ նաեւ «Աշխարհացոյց»-ի համառօտ բնագրում, ուստի վերջինս եւս պիտի կազմուած համարուի 620 կամ 630-ական թվականներին: Ժամանակադրական այս սահմանը թոյլ է տալիս մտածել, որ համառօտութեան հեղինակը կարող էր լինել երիտասարդ եւ դեռ վարդապետական գիտելիքներ ձեռք չբերած

21 Սեբեոսի եպիսկոպոսի Պատմութիւն, մշ. աշխ., էջ 124; Պատմութիւն Սեբեոսի, մշ. աշխ., էջ 170:

22 Առաւել մանրամասն տե՛ս MARQUART, J., *Ērānšahr nach der Geographie des Ps. Mosēs Xorenaçi: Mit historisch-kritischem Kommentar und historischen und topographischen Excursen*, Berlin, 1901; *The Geography of Ananias of Širak (AŠXAR-HAC'OYC')*. The Long and the Short Recensions. Introduction, Translation and Commentary by HEWSEN, R. H., Wiesbaden 1992, 226-241:

Անանիա Շիրակացին (ով ծնունել էր 610ականների սկզբներին), որին յետագայ ձեռագրական աւանդոյթը վերագրում է համառօտ «Աշխարհացոյց»ի մի քանի միաւորների հեղինակումը: Միեւնոյն ժամանակ պիտի նշենք, որ աղբիւրագէտի հայեացքով ամենեւին ընկալելի է Շիրակացուն բուն «Աշխարհացոյց»ի հեղինակ համարող մասնագիտական վարկածի շարունակական արժարժումը (վերջերս՝ Ռ. Հիւսըն եւ Ուրիշներ), քանի որ, ինչպէս նկատել է Ս. Երեմեանը, դրա բացառման համար լիովին բաւարար է 618ին հիմնադրուած կամ օծուած Սբ. Հռիփսիմէի տաճարի փոխարէն սրբուհու մատուռի յիշատակման փաստը:

Մեր նշած ժամանակագրական տարբերակով (630) կարող է ընկալելի դառնալ ե՛ւ հետագայ ձեռագիր ժողովածոներում Անանիա Շիրակացու երկերի հետ համառօտ «Աշխարհացոյց»ի հարեւանութեան փաստը, ե՛ւ նրա այդ երկերում առկայ տիեզերագիտական որոշ պատկերացումների շեղումը «Աշխարհացոյց»ի հեղինակի պատկերացումներից (որ մանրամասն ցոյց էին տալիս Յ. Մանանդեանը եւ Աշ. Աբրահամեանը)²³: Թըւում է՝ թէ հասուն տարիքում բազմաբեղուն վարդապետը լիովին կարող էր անդրադարձած չլինել պատանի տարիների իր «տեխնիկական» գործերից մէկին, բայց միաժամանակ՝ դա հազիւ թէ խանգարէր նրա գիտուն սաներին՝ այդ գործը եւս մեքենայաբար ներառելու իրենց ուսուցչի նորակազմ ժողովածոներում:

«Մղոնաչափ»ից յետոյ հեղինակային ուշադրաւ՝ «Այս քեզ յիմէմ ընծայ... Ո՛ղջ լեր ի Տէր» ընծայագրութեամբ աւարտող «Աստղաբաշխական երկրաչափութիւն» կամ «Աւդաչափութիւն» վերտառութեամբ աւարտական հատուածի (որի՝ «Աշխարհացոյց»ի մաս լինելը հիմնաւորապէս ապացուցել են դեռ Յ. Մանանդեանը եւ Աշ. Աբրահամեանը)²⁴ վերջին պարբերութիւնը մենք փորձել ենք համեմատել Մովսէս Քերթոզի (նաեւ՝ Քերական, Զ. կամ Է. դար) երկերից մէկի բնագրի հետ: Նշենք, որ նրա մասին ուղիղ կենսագրական տեղեկութիւններ չեն պահպանուել. ըստ Նիկ. Ադոնցի եւ Յակոբ Քէօսէանի՝ Մովսէս Քերթոզը ծնունել է, հաւանաբար, Ե. դարի վերջին քառորդին եւ մահացել Զ. դարի առաջին կէսին, սակայն դա պէտք է համարել վերապահելի: Համաձայն Ասողիկի վկայութեան՝ Մովսէսը Բագրեւանդի եպիսկոպոսն էր:

23 ԱՐԲԱՀԱՄԵՆ, Ա., Խորենացուն վերագրուող «Աշխարհացոյց»-ի հեղինակի հարցի շուրջը, Երեւան 1940:

24 Անդ:

Ելնելով մեզ յայտնի իր մի քանի երկերից՝ նա հմուտ է եղել յունարէնի, ինչպէս նաեւ՝ քերականութեան, հռետորութեան եւ իմաստասիրութեան մէջ. իր գրչին են վերագրուում Դիոնիսիոս Թրակացու «Քերականութեան» թարգմանութիւնն ու մեկնութիւնը, Փիլոն Եբրայեցու որոշ երկերի հայացումը, ինչպէս նաեւ՝ Յաղագս միոյ բնութեան Բանին մարմնացելոյ՝ դաւանաբանական երկասիրութիւնը («Գիրք քոթոցում»), որոշ շարականներ («Աստուծայտնութեան նրագայոյցին», «Սբ. Ծնընդեան կամ Աստուծայտնութեան Աւուրցն», «Կարգ Յարութեան»՝ ԱԶ.-ԴԿ.՝ «Մեծացուցե՛նք որով հանդերձ, «Տեսողնդառաջին» եւ «Վերափոխման Ա. աւուրն»), ինչպէս նաեւ մի աղօթք²⁵։

Արդ՝ «Մատենագիրք Հայոց»ում հրատարակուած Մովսէս Քերթովի «Երանելոյն Մեծի Քերթողահարն Մովսէսի եպիսկոպոսի [Յաղագս միոյ բնութեան Բանին մարմնացելոյ]» երկի բնագրում (էջ 1214բ, նախ. 62՝ վերջին) մասնաւորապէս կարդում ենք.

«...Ձայս քեզ փոքր ի շատե պատնառ յանդիմանութեան, յաղագս բաժանեալ ուսման ալլանդակացն, զի ծանցես, ո՛վ աստուածասէր, յոմանց փախչել, եւ քաղալ անասանելի եւ անշուշտ հաւատոյ դաւանութեան ի մարգարէիցն տնկեալ եւ յառաքելոցն զարդարեալ, պայծառացուցանելով ընդ տիեզերս, զի ընդ նոսին եւ պարգեւացն հասանցեմք, շնորհաւ եւ մարդասիրութեամբ Տեսոն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում Հար եւ Հոգւոյն փա՛ռք յաւիտենից յաւիտեանս»։

Կարծում ենք, որ իր շարադասութեամբ ու ոճով սրա հետ կարող է համեմատուել «Աշխարհացոյց»ի՝ «[Է.] Աստղաբաշխական երկ[ր]աչափութիւն» հատուածի աւարտական բնագրի մի կտորը (նախ. 13՝ նախավերջին)։

«Այս քեզ յինէն ընծայ գրատրական, վերծանեալ ի Պոսիփորի Ներգործութենէն, եւ գեղեցեղեալ ի Պտղոմեական Գրամատիկոս տառիցն եւ ի Բազմավէպ պատմութենէն Պապայ Աղեփաանդաբացոյ»²⁶։

Եթէ մեր վարկածը ճիշտ է, ապա կարելի է ենթադրել, որ «Աշխարհացոյց»ի հեղինակը կարող է համարուել հէնց այս՝ 2.-է. դարերու մասնազիր Մովսէս Քերթովը։

ԱԼԵԳՍԱՆ ՅԱԿՈԲԱՆ

25 Մանրամասն տե՛ս «Մատենագիրք Հայոց», հտ. Դ.-Ե., է. դար, Ամթիլիաս 2005, 1209-1214։

26 *Աշխարհացոյց է. դարի Անանունի, Գիտա-Քննական քննարկ Ա. ՅԱԿՈԲԱՆԻ, սն. 193։*

Summary

TRYING TO FIND THE AUTHOR OF THE “ARMENIAN GEOGRAPHY” OF THE VII CENTURY

ALEQSAN HAKOBYAN

Our analysis reveals that the “Armenian Geography of the VII century” (“Ašxarhac’oyc’”) was written in the second half of the 610th years and was used as geographical reference by the Armenian delegation, which took part in the famous “Persian Council” in the capital of Sasanian Iran Ktesiphon (615/616 or 617/618 years). Comparison of the texts shows, that the author of this work could have been an Armenian writer of the VI-VII centuries Movsēs Qerdogh. Three other writings of him has also reached us.